



20. ԲԱԶՐԿՆԻ ԽԱՎԵՆԻՆ

Բազրկանպաշի մի կ'եղնի. անվալադ կ'եղնի:

Կ'ելնի բազրկան կ'ըսե. - Կնի՛կ, ախր քեզնե ժառանգ մի չեղի, ես կերթամ մը կարգվիմ:

Կ'ելի եղ կնիկ կըսե. - «Վու՛ն, ես պիտի էլիմ խավկի՛թ մի պտի փաթթեմ շոր, դնիմ իմ փոր: Իմալ օր Աստված կուզե, ք'ենե»:

Իրիկ կըսե. - Բազրկանբաշի, մը՛ կարգվի, ես երկու հոգով իմ, մի կարգվի, չուր պառկիմ:

Էդ խավկիթ փաթթեր է, դրեր է փոր: Ին ամիս կը մնա, ին օր, ին սհաթ ին դամ, բերե զետ հավկիթ դնե օրորոց ու կ'օրորե: Բազրկան գացեր է հեռու քաղաք, հետ ուր բազրկնութենին:

Բազրկան կիգա, օր թաքմիլ օրորոց մի, մըչ ուր տախտին է:

Ինատ կենա, բազրկան կիշկա, կը տեսնա հավկիթ մի մըչ օրորոցին: Կը վերցու կը զարկա գետին: Քու՛նքուշ վառեկ մի կեղնի եղ հավկթեն: Էդ վառիկ կը պետնա: Օրերուց օր մի եղ վառիկ կերթա, կը մտի մըչ ջրուն կը լողկնա:

Թակավորի տղեն ծիով կիգա կը տեսնա, օր Արևուց թակավորի ախչիկ մի ուր չավառեք տվեր է մըչ ջրուն:

Թակավորի տղեն կայնե, սեր կենա:

Կըսե. «Կայնիմ խինք, եղ ի՞նչ խագուստ կը հագի: Էդոր տերու տուն դո՞ր է, դո՞ր կերթա»:

Չիու գամ կը բռնա, կը կայնի: Կը տեսնա օր ախչիկ խավենին կը հագի, կ'ելնի վառիկ մի ու կերթա:

Թակավորի տղենն էկավ բագրկանպաշու դուռ, դարցավ էկավ մամուն ըսեց. - Ես բագրկնի խավենի մի տեսեր իմ, ես զէն խավենին կամենմ:

Թակավորի սուլթան գնաց թակավորին ըսեց. - Ի՞նչ կըսես քու տղեն, քու տղեն կըսես՝ ես բագրկանի խավենին կամենմ, ես մարթ չիմ առնի:

Թակավոր ըսեց. - Ջանըմ, երկու խավազ ճամբեք՝ բագրկանպաշու խավենին թ'առնին իգան: Խավենին ի՞նչ է, օր բագրկանպաշին ընծի լայեղ չէնա:

Էլնվ, ըսեց. - Դրեք մըջ փայթոնին, խավենին բերեք:

Առին, բերին: Տարան գիշեր մեկտեղ: Խավենին հանեց, թալեց, ցնգանի շորեր հագավ:

Սաբախտան էլնվ զուր խավենին խագավ, թառ մի կապեց, էղիր վրեն:

Եվրոպայու թակավոր մի եկավ, զետա թակավորի ախչիկ ուզեց տարավ ուր տղին:

Թակավորի սուլթան է, կըսես. - Օղո՛ւ, ես քնացի բագրկանի խավենին բերեցի քզի համար, մարթ չկա՛ իմ ախչկան հալվներ կտրես կարես:

Թակավորի սուլթան էլավ գնաց տղի հօդեն, բագրկանի խավենին բռնեց ծեծեց:

Ըսավ. - Սիրով էղե՛ր, վըր բագրկանի խավենուն սիրով պտի էղեր, սկի մեկ մի չկա իմ ախչկա շորեր կարես:

Թակավորի տղենն էկավ ըսեց. - Քու մամ էկավ ընծի էմալ ծեծեց, իմ պառեկ կտորեց, ի՞նչ կուզես ընծեն քու մամ:

Բագրկանի խավենին էր, էլավ գնաց մըջ էղ խարկեն, տեսավ խաց կը կողեն, զարկեց կտուց, կուտ մը առավ ու փախավ:

Տարավ բերեց սո՛ւլթան ակիշ մը էղ խավենու պառեկին զարկեց:

Էն օլոր սաբախտան սուլթան օր շոր կը կըտրեր, մկրատ մի զարկեց խավենու պառեկին:

Էլնվ սաբախտան չաք մի զանրկեց խավենուն ու քելեց:

Էլնվ սաբախտան, խավենին խանեց թալեց տուն ու քնաց մըջ խարսընքին ու բռնեց խաղաց:

Թակավորի սուլթան ըսավ. - Հարևելից թակավորի ախչիկ, քու ոտներուն մեռնիմ, դու ո՞ր գեղեն ես, ընլա խորոտիկ:

Ըսավ. - Ես Մկրտու գեղեն եմ, իմ պապու գեղի անուն Մկրա՛տ ա:

- Լաո՛, - ըսեց, - խոզի դու իմ տղի կնիկ էղներ, մուռտալ խավենի մի կա, կը նստի ծոտե վըր չլերուն:

Էլն՛վ են խլիսուն ա; Էկավ խաղաց:

Իրիկն ըսեց. - Ախջի՛, մի՛ գա խաղա, վոլա, դու կ'աջըռոխս:

Ըսեց. - Պտի էրթամ, չուր քու մամու բամբառակներ խանեմ դուս:

Թակավորի կնիկ ըսեց. - Յեսավուր ախջիկ խընչ հերեկին խորո՛տ ա, խոզե դու ընծի խարս էղներ:

Ախջիկաց կը խարցու, կըսե. - Քունքո՛ւշ ախջիկ, քու պապու երկիր ի՞նչ երկիր է:

Սուլթան կըսե. - Ես Ակիճա գեղեն իմ:

Յէնօր, օլորլե կիզա խարսնիս, կը խաղա: Սուլթան թակավորին կըսե. - Արևելոց թակավորի ախջիկ մի կիզա խաղա, խոզե զէնի ուզենք մըր տղին, խավենին չուզենք:

Կըսե. - Ախջի, դու ի՞նչ գեղեն ես:

Կըսե. - Իմ պապու գեղի անուն Ջաք է:

Թակավորի տղեն կիզա կըսե. - Ախջի, մ'երթա խարսնիք խաղա: Դու պտի նազար առնիս:

Կիզա կըսե. - Մա՛մ, ինչո՞ւ կ'երթաս բազրկնի խավենուն կը տփես, բա՛ն կ'ըսես, ես կամենեմ պսակիմ:

Կէլի տղեն շուտով հառեջ կիզա, կնկա խավենին կը բռնա, կը թալա սորեն, կը վառե:

Կիզա կըսե. - Վոլ՛ն, էտա ախջիկ խորոտ, անղալատ ախջիկ է, էրթամ ուզիմ քզի, բազրկնի խավենու թարկ տո՛ւր:

Կիզա հօդի դուռ կը բանա, կը տեսնա օր Արևելից թակավորի ախջիկ մի կայնե հօդա, շամաղ տվի հօդի պատեր:

Մամ կ'երթա կըսե. - Որդի՛, գնա տես, ախջիկ մի էկեր քու հօդեն, շամաղ տվիր հօդի պատեր:

Կըսե. - Թակավորի սուլտան, էտի բազրկնի խավենին է, օր շամաղ տվի հօդի պատեր:

Էն խասավ ուր մուրազին, դուն էլ՝ քոն:

